ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«24» սեպտեմբերի 2018 թվականի N 117-Ա

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցները հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 143-Ն հրամանի 24-րդ և 30-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ներքին աուդիտի բաժնի 2018 թվականի տարեկան ծրագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ներքին աուդիտի բաժնի պետ Կարեն Թորոսյանին, գլխավոր մասնագետներ՝ Վահան Մարգարյանին, Աննա Հակոբյանին և նույն բաժնի առաջատար մասնագետ Լուսինե Արզումանյանին՝

2018 թվականի սեպտեմբերի 26-ից սկսած՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ենթակայության տակ գտնվող «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի 2015 թվականի ապրիլի 1-ից մինչև 2018 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի գնումների համապատասխանության աուդիտ և 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական աուդիտ:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

/Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ